

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2017 թվականի N .... – Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՁԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությունը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԶԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հաստատել «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

**Հոդված 2.** Սահմանել, որ՝

- 1) Ծրագիրն արտացոլվում է պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերում և պետական բյուջեում՝ ծրագրային դասակարգմամբ:
- 2) Կրթության առաջանցիկ զարգացման նախադրյալներն ապահովելու նպատակով, կրթության ոլորտին ուղղվող ծախսերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ծրագրերով և միջնաժամկետ ծախսային ծրագրերով սահմանված չափաքանակներին:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

«ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական  
ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի

Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը  
զարգացման պետական ծրագիր

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Ներկայումս Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը: Տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է: Ըստ այդմ այն պետք է բավարարի և՛ յուրաքանչյուրին, և՛ ողջ հասարակությանն ու պետությանը, որպես հավաքական ամբողջություն:

2. Սույն Ծրագիրը մշակվել է հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը, ինչպես նաև կրթության համակարգի վերջին տարիների ձեռքբերումներն ու մարտահրավերները, ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» և «Կրթություն 2030. Դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչհոնի հռչակագիրը: Ծրագրի մշակման շրջանակներում իրականացվել է համակողմանի հետազոտություն՝ ուղղված ՀՀ կրթական համակարգում առկա հիմնախնդիրների և դրանց լուծման մեխանիզմների բացահայտմանը՝ հետևյալ հինգ ուղղություններով. կրթության մատչելիություն, կրթության որակ, հանրակրթական ծրագրեր, կրթության կառավարում, կրթության արդյունավետություն:

3. Առաջիկա տարիների կրթության զարգացման թիրախները, գերակայությունները և գործողությունների շրջանակը միտված են առկա խնդիրների լուծմանը՝ ուշադրությունն առավելապես կենտրոնացնելով կրթության առաքելության, հայրենասիրական դաստիարակության, որակյալ բովանդակության, յուրաքանչյուր

քաղաքացու ինքնահիրացման հնարավորությունների ապահովման, պետության առջև կանգնած մարտահրավերների վրա:

## II. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

4. Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է: Պետությունը պետք է ապահովի համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Հասարակությունը կիսում է կրթության քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատվությունը, որը ենթադրում է ներառական հանրային գործընթաց: Քաղաքացիական հասարակությունը, ուսուցիչներն ու դասախոսները, մասնավոր հատվածը, համայնքը, ընտանիքը, երիտասարդներն ու երեխաները կարևոր դեր ունեն որակյալ կրթության իրավունքի իրացման գործում: Պետության դերը վճռորոշ է կարգավորող սկզբունքների և նորմերի սահմանման, դրանց վերահսկման համար:

5. Կրթությունը հանրային արժեք է: Այն պետք է նպատակաուղղված լինի տվյալ քաղաքակրթական տեսակի լինելիության ապահովմանը, ձևավորի ազատ և պատասխանատու քաղաքացի: Կրթության միջոցով տեղի է ունենում մարդու անձնային և մասնագիտական լիարժեք զարգացումը, ազգային և համամարդկային արժեքների վրա խարսխված աշխարհընկալման ձևավորումը: Կրթությունը սերունդների հոգևոր-մշակութային ժառանգության, քաղաքակրթական արժեքների պահպանման և փոխանցման, ինչպես նաև արժեքների զարգացման պատասխանատվություն դաստիարակող հիմնական համակարգն է:

6. **Կրթության զարգացման գլխավոր նպատակն է** ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը.

- 1) լիարժեք ծառայում է ազգային շահերին,
- 2) արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին,
- 3) յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն:

## III. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

7. Կրթության զարգացման գլխավոր նպատակի իրականացման համար կորդեգրվեն հետևյալ ռազմավարական մոտեցումները.

1) **Կարիքներից բխող պլանավորում** – կբազմազանեցվեն ուսումնական ծրագրերը, կրթության կազմակերպման ձևերն ու մեթոդները, կրթություն ստանալու հնարավոր ճանապարհները,

ա. կապահովվի կրթական ծրագրերի ճկունությունը՝ դրանք սովորողների, նրանց ընտանիքների, համայնքի և տնտեսության կարիքներին համապատասխանեցնելու հնարավորությունները, կընդլայնվեն ընտրովի դասընթացները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և անձանց համար անհատական ուսուցման պլանների, մոդուլային ծրագրերի, հոսքային ուսուցման կիրառումը,

բ. միաժամանակ կզարգանան կրթության կազմակերպման ձևերը. կընդլայնվեն դուալ և հեռավար կրթության հնարավորությունները, կներդրվի ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմ, կապեր կստեղծվեն կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերի միջև, ինչը հնարավորություն կտա կրթական ցանկալի վերջնարդյունքներին հասնելու համար ընտրել առավել հարմար, սեփական հնարավորություններին համապատասխանող ճանապարհ: Կներդրվեն ուսումնական պարապմունքների կազմակերպման ժամանակակից մեթոդներ և այլն,

գ. կրթության համակարգի բազմազանեցումը կառնչվի նաև ուսումնական հաստատությունների կազմակերպական իրավական ձևերին: Կխթանվի ուսումնական հաստատությունների համատեղ, այդ թվում՝ պետական-մասնավոր գործընկերությամբ հիմնադրման, կառավարման համակարգում սոցիալական գործընկերների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը: Կխրախուսվի ցանցային կրթական համակարգերի ներդրումը և համագործակցային միջավայրի ձևավորումը,

2) **սոցիալական երկխոսություն** - կարիքներին արդյունավետ արձագանքելու նպատակով կամրապնդվեն հետադարձ կապի և սոցիալական երկխոսության մեխանիզմները. պարբերաբար կանցկացվեն հասարակական կարծիքի ուսումնասիրություններ, կստեղծվեն հանրային քննարկման հարթակներ, կբարելավվեն որոշումների կայացման մասնակցային մեխանիզմները,

3) **գործընկերային համագործակցություն** - կամրապնդվի գործընկերային համագործակցությունը մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ: Որոշ գործառույթների իրականացումը, կրթաօժանդակ ծառայությունների մատուցումը կարող է փոխանցվել մասնագիտական ոլորտում արհեստավարժ և հասարակության վստահությունը վայելող կազմակերպությունների: Պետական աջակցություն կցուցաբերվի կրթության զարգացման գերակայություններին և սկզբունքներին համապատասխանող՝ միջազգային և հայաստանյան կազմակերպությունների նախաձեռնությամբ իրականացվող ծրագրերին, որոնք մասնագիտական փորձաքննության արդյունքներով կներառվեն կրթության զարգացման ծրագրերի փաթեթում:

#### **IV. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

8. Կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունքներն են.

1) կրթական հաստատությունների ինքնավարության և ինքնաարժեքավորման համակարգի կիրառում,

2) ներառականություն՝ կրթության բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը պետք է ընդգրկի հասարակության բոլոր խավերը՝ ներառյալ խոցելի խմբերը: Յուրաքանչյուր քաղաքացու, շահագրգիռ հասարակական կազմակերպությանը պետք է հնարավորություն ընձեռնվի ներդրում ունենալու որոշումների կայացման, ծառայությունների մատուցման և արդյունքների

գնահատման գործընթացներում: Նման հնարավորություն պետք է ընձեռնվի նաև սփյուռքի մեր հայրենակիցներին,

3) տարածքային համաչափ զարգացում՝ տարածքային համաչափ զարգացումը կայուն զարգացման կարևոր նախադրյալն է: Կրթության համակարգում հավասարության ապահովումը և տարածքային անհամաչափ զարգացման մեղմումը կրթության միջոցով պետք է լինեն իրականացվող քաղաքականության անկյունաքարային սկզբունքները,

4) ազգային և համամարդկային արժեքների համադրում՝ Հայաստանի կրթական համակարգը միջազգային կրթական համակարգի անբաժանելի մաս լինելով, ակտիվորեն ներգրավված է եվրոպական և տարածաշրջանային կրթական ինտեգրացիոն ծրագրերում, և նպատակաուղղված է հայ քաղաքակրթական ժառանգության վրա հիմնված արժեհամակարգի ամրապնդմանը,

5) թափանցիկություն և հաշվետվողականություն՝ առաջընթացի կարևոր նախապայման է բոլոր շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությունը, ինչը կարող է ապահովվել միայն առավել թափանցիկ միջավայրում և բաց հաշվետվողականության պայմաններում:

## **V. ՄԻՆՉԵՎ 2030 Թ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ**

9. **Թիրախ 1.** Մինչև 2030 թվականը ապահովել, որպեսզի բոլոր երեխաները ստանան որակյալ միջնակարգ կամ նախնական մասնագիտական կրթություն՝ ինքնուրույն կյանքի լիարժեք պատրաստված լինելու, կրթության հաջորդ աստիճանում ուսումն արդյունավետ շարունակելու և արժանապատիվ աշխատանքային գործունեությանն անցնելու նպատակով:

10. **Թիրախ 2.** Մինչև 2030 թվականը կրթության բոլոր մակարդակներում ամրապնդել դաստիարակության բաղադրիչը: Պետականության դերի գիտակցման, հայրենասիրական, քաղաքացիական և էկոլոգիական դաստիարակության միջոցներով բոլոր սովորողներին զինել հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով:

11. Կրթությունը կարևոր դերակատարում ունի քաղաքական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բազմաթիվ խնդիրների առջև կանգնած Երկրի կայուն զարգացող և բարեկեցիկ հասարակության կայացման գործում: Նման կրթությունն իր բովանդակությամբ և ձևերով պետք է համապատասխանի առկա խնդիրներին, ապահովի համապատասխան գիտելիքների, կարողությունների, արժեքների և վերաբերմունքի ձևավորմանը, դաստիարակի հասարակության ակտիվ և պատասխանատու քաղաքացի, որն ունակ է վարել արդյունավետ կյանք, դրսևորել առողջ ապրելակերպ, պաշտպանել սեփական և հարգել ուրիշների իրավունքները, արժևորել սեփական ինքնությունը և առաջնորդվել հանդուրժողականության սկզբունքներով, պաշտպանել ազգային շահը, կայացնել գիտակցված որոշումներ, նպաստել խաղաղությանը և պատրաստ լինել ծառայելու ազգային և համամարդկային

խնդիրների լուծմանը: Կարևոր է նաև մարդու իրավունքների կրթության բաղադրիչի ներառումը և այդ համատեքստում ցեղասպանությունների՝ որպես մարդկության դեմ գործած հանցագործության մասին պատմական փաստերի վերաբերյալ գիտելիքների փոխանցումը:

12. Նման խնդիրների լուծումը չի կարող սահմանափակվել միայն պետական ուսումնական ծրագրերով սահմանված կրթության շրջանակներում: Լիարժեք արդյունքի հասնել կարելի է օգտագործելով նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ռեսուրսները, միաժամանակ, կրթության համակարգում որդեգրելով ժողովրդավարական սկզբունքներ՝ թե կառավարման, թե կրթական գործընթացի կազմակերպման առումով:

13. **Թիրախ 3.** Մինչև 2030 թվականը բարելավել 3-6 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիություն ու ապահովել 5 տարեկանների առավել ընդգրկվածություն:

14. Նախադպրոցական կրթության կազմակերպումը հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը և հիմնականում ֆինանսավորվում է տեղական բյուջեներից: Այնուամենայնիվ, թե երեխայի համակողմանի զարգացման, թե դպրոցին պատրաստված լինելու և հավասար մեկնարկային հնարավորությունից օգտվելու տեսանկյունից, այն կարևոր նշանակություն ունի: Այս առումով պետական քաղաքականությունն ուղղված է խթանելու նախադպրոցական կրթության զարգացումը, օժանդակելու համայնքներին՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի:

15. **Թիրախ 4.** Մինչև 2030 թվականը զգալիորեն ավելացնել մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն ունեցող երիտասարդների և մեծահասակների թիվը՝ վերջիններիս համար արժանապատիվ աշխատանք գտնելու, գործազրկությունը նվազեցնելու և գործարարությունը խթանելու նպատակով:

16. Նկատի ունենալով մարդկային ռեսուրսների հույժ կարևորությունը երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման գործում, մասնագիտական կրթությունը պետք է երիտասարդներին և մեծահասակներին զինի «21-րդ դարի» կարողություններով և հմատություններով: Կյանքի բոլոր փուլերում յուրաքանչյուրին պետք է ճկուն և բազմափսի հնարավորություններ ընձեռնվեն ուսանելու և վերապատրաստվելու համար: Մասնագիտական կրթության զարգացման ծրագրային հիմնական ուղղությունները համապատասխանում են Բոլոնիայի և Թուրինի գործընթացներին:

17. **Թիրախ 5.** Մինչև 2030 թվականը ապահովել բոլոր խոցելի խմբերի՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հավասար մասնակցության հնարավորությունը կրթության բոլոր մակարդակներում:

18. Կրթության բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ստեղծել որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլորի համար, ներառյալ՝ խոցելի խմբերի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կյանքի դժվարին պայմաններում հայտնված աղքիկների և տղաների, կանանց և



տղամարդկանց: Կրթության ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը, բարեփոխումները, նախաձեռնություններն ու մշակումները պետք է հաշվի առնեն սովորողների առանձին խմբերի և անհատների կարիքները, նախատեսեն դրանց արձագանքման համապատասխան մոտեցումներ:

## **VI. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ**

**19. Կրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է:** Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում, կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

20. Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակն ընդգրկում է.

- 1) կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում, մասնավորապես՝
  - ա. ՀՀ որակավորումների ազգային շրջանակի հետագա կատարելագործում և ամբողջական ներդրում՝ ապահովելով որակավորումների համադրելիությունը եվրոպական որակավորումների համապարփակ շրջանակի հետ և համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին,
  - բ. ուսումնական ծրագրերի արդիականացում՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և միաջազգայնորեն ընդունված չափանիշներին, մասնավորապես կարևորելով մաթեմատիկայի, բնական գիտությունների, ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների, օտար լեզուների ուսուցումը, ինչպես նաև սովորողների քննադատական, վերլուծական, նորարարական, ինքնուրույն և ստեղծագործական մտածողության զարգացումը,
  - գ. սովորողների օպտիմալ ուսումնական ծանրաբեռնվածության սահմանում, ներառյալ արտադասարանական և տնային աշխատանքները,
  - դ. օժանդակություն նորարարական, այլընտրանքային, կրթության գերազանցության և փորձարարական կրթական ծրագրերի մշակմանը, ներդրմանը և իրականացմանը,
  - ե. կրեդիտային համակարգի ընդլայնում՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ ավագ դպրոցում և լրացուցիչ կրթության ոլորտում,
  - զ. բուհերի գիտահետազոտական գործունեության ընդլայնում, գիտական կազմակերպությունների և բուհերի համագործակցության ամրապնդում: Բուհերի ուսանողների և դասախոսների ներգրավում գիտական կազմակերպությունների գիտահետազոտական աշխատանքներում, այդ կազմակերպությունների գիտաշխատողների ներգրավում բուհի կրթական գործընթացում,

է. առանձնակի ուշադրության հատկացում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը և կարիերայի ուղղորդմանը, ստեղծելով համապատասխան կենտրոններ և ներդնելով «ձեռներեցության ուսուցում» բոլոր մակարդակներում,

2) հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում, մասնավորապես՝

ա. դպրոցական շենքերի հիմնանորոգման և նոր շենքերի քաղաքաշինական նախագծերի մշակում՝ հաշվի առնելով կրթության նորացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները,

բ. ըստ գնահատված կարիքների՝ շենքերի հիմնանորոգում, սեյսմակայունացում և նոր դպրոցական շենքերի ու շինությունների կառուցում,

գ. ուսումնական հաստատությունների կողմից ռեսուրսների և էներգիայի խնայողաբար օգտագործում, իրենց կարիքների համար էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործում, դպրոցական շենքերի էներգաարդյունավետության բարձրացում, բնապահպանական կայունության և էներգախնայողության մշակույթի տարածմանն ուղղված կրթական մոդելների մշակում ու զարգացում,

դ. ուսումնական հաստատություններում համալիր անվտանգության ապահովում, որը ներառում է ապահով և հարմարեցված միջավայր, աղետների ռիսկերի կառավարում և աղետների ռիսկերի մեղմացմանն ուղղված կրթություն,

ե. ուսումնական հաստատությունների ուսումնական գույքի, ժամանակակից համակարգչային սարքավորումների շարունակական արդիականացում, համացանցի որակյալ հասանելիության ապահովում, ժամանակակից լաբորատորիաների, մարզադահլիճների և գրադարանների ստեղծում,

զ. հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխայակենտրոն միջավայրի ստեղծում՝ ներդնելով ուսումնաօժանդակ ծառայություններ, արտադասարանական խմբակներ, դպրոցական սնունդ, հաստատությունների գործունեության արդյունավետ աշխատակարգ,

3) բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և դասախոսական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում ու կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ, մասնավորապես՝

ա. սահմանամերձ և հեռավոր գյուղական համայնքների դպրոցները մանկավարժական կադրերով համալրման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդնում,

բ. մանկավարժական գործունեության համար որակավորման պահանջների խստացում, նրանց աշխատանքային նկարագրերում միջազգային չափանիշների ներառում,

գ. մանկավարժական կրթության արդիականացում՝ ապահովելով մանկավարժական մասնագիտությունների ցանկի, որակավորման բնութագրերի, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների

համապատասխանությունը ժամանակակից պահանջներին, ուսումնական պրակտիկայի արդյունավետ համակարգի ներդրում,

դ. բարձրագույն մանկավարժական կրթության կառուցվածքի բարելավում և հստակեցում: Մարզերում և մայրաքաղաքում գործող մանկավարժական բուհերի կրթական ծրագրերի համադրում և միասնական չափանիշների ապահովում,

ե. ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնում, վերապատրաստումների արդյունավետության մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների մշակում ու ներդրում, Կրթության ազգային ինստիտուտի առաքելության, նպատակների և կառուցվածքի արմատական վերանայում, կարողությունների զարգացում,

զ. ուսուցիչների իրավական կարգավիճակի հստակեցում, աշխատանքի վարձատրության, խրախուսման նոր մեխանիզմների ներդրում՝ հատուկ ուշադրություն հատկացնելով սահմանամերձ և հեռավոր գյուղական համայնքների ուսուցիչներին,

է. մանկավարժներին մեթոդական աջակցության, նորարարական գիտելիքներով զինելու նպատակով մանկավարժական գիտական հետազոտությունների խթանում,

ը. ուսուցչի մասնագիտության հեղինակության և հանրային դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագրերի մշակում և իրականացում,

4) կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում, մասնավորապես՝

ա. դասագրքերի որակի բարելավում, համապատասխանեցում առարկայական ծրագրերին և չափորոշիչներին, դրանց բովանդակային համապատասխանեցում սովորողների տարիքային առանձնահատկություններին՝ բեռնաթափելով ավելորդ գիտականացումից, սանիտարահիգիենիկ պահանջների վերանայում,

բ. հայալեզու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով տպագիր և էլեկտրոնային ուսումնական պաշարների բանկի հարստացում, նկատի ունենալով նաև սփյուռքահայ կրթօջախների կարիքներին համապատասխանությունը,

գ. ուսումնական հաստատություններում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում,

դ. տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կրթական ծրագրերի բարելավում, առկա լավագույն փորձի ընդլայնում և զարգացում:

21. Որակի ապահովման կարևոր բաղադրիչ է **կրթության որակի հավաստման և գնահատման համակարգը**, որը պետք է ներառի ինչպես հստակ սահմանված վերջնարդյունքների, այնպես էլ ուսումնառության միջավայրի և գործընթացի գնահատումը: Կձևավորվի ազգային և միջազգային չափորոշիչներին համապատասխանության հավաստման վստահելի և օբյեկտիվ համակարգ:

22. **Կրթության որակի բարելավման քաղաքականությունը պետք է զուգորդվի մատչելիության բարձրացման և կրթության մեջ առավելագույն ընդգրկվածության ապահովման, ինչպես նաև համակարգի արդյունավետության բարձրացման ծրագրերով**, որոնք դասվում են գերակայությունների երկրորդ մակարդակին:

23. Պետք է մեղմացվեն և վերացվեն սոցիալական, տնտեսական և մշակութային այն գործոնների ազդեցությունը, որոնք դեռևս խոչընդոտում են որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովմանը՝ կրթական ծառայությունների բազմազանեցման, ֆինանսավորման նպատակայնության բարձրացման, հասարակական կարծիքի ձևավորման և այլ հնարավոր միջոցներով:

24. Կրթության մատչելիության բարձրացման և կրթության մեջ առավելագույն ընդգրկվածությունն ապահովելու գործողությունների շրջանակն է.

1) ծախսարդյունավետ մոդելների ներդրմամբ նախադպրոցական ծառայությունների համընդհանուր ծածկույթի ապահովում, առաջնահերթություն տալով գյուղական, սահմանամերձ, ազգային փոքրամասնությունների համայնքներին և սոցիալապես անապահով խմբերին,

2) պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկերի կանխարգելման, դուրս մնացած երեխաների հայտնաբերման և նրանց ուսուցման համակարգ վերադարձման մեխանիզմների գործարկում,

3) ուսումնական հաստատությունների տեղաբաշխման սկզբունքների մշակում, և դրանց համապատասխան հաստատությունների ցանցի զարգացում՝ ապահովելով մատչելիությունը և տարածքային զարգացման ծրագրերով սահմանված առաջնահերթությունները,

4) սոցիալապես անապահով խավերին պետական աջակցության ծավալների աստիճանական մեծացում և հասցեականության բարձրացում,

5) հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում, այդ թվում՝ գյուղական և սահմանամերձ համայնքների համար,

6) ավագ դպրոցներին տրանսպորտային հնարավորություններով ապահովում:

25. Կրթության զարգացման սահմանափակ ֆինանսական ռեսուրսները պահանջում են **համակարգի արդյունավետության ապահովում**: Կստեղծվի արդյունավետ, բաց, կատարողականի և վերջնական արդյունքների վրա հիմնված կառավարման համակարգ՝ ապահովելով ինքնավարությունը, հզորացնելով ֆինանսավորման համակարգը: Մասնավորապես՝

1) կամրապնդվի տվյալների վրա հիմնված կառավարման համակարգը,

2) կմբողջացվի կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (e-Education),

3) բոլոր մակարդակներում կսահմանվեն առաջընթացի առանցքային ցուցիչները (KPI),

4) կներդրվի արդյունքից կախված ֆինանսավորման համակարգ,

5) կտարանջատվեն կրթության կառավարման և ֆինանսատնտեսական կառավարման գործառույթները՝ առաջնայնությունը տալով առաջինին,

6) անցում կկատարվի ծրագրային ֆինանսավորման և ծրագրերի կառավարման մեխանիզմներին,

7) փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող գյուղական դպրոցների կրթության կազմակերպման ծախսարդյունավետ ձևերի ներդրում,

8) կհստակեցվեն բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները, կբազմազանեցվեն կարգավիճակները՝ ըստ կրթական ծրագրերի աստիճանի, կձևավորվեն համալսարաններ՝ որպես ինստիտուտների միավորումներ,

9) կներդրվեն ցանցային կրթական համակարգեր և կձևավորվի համագործակցային միջավայր,

10) կբարձրանա բուհերի ներքին արդյունավետությունը՝ մասնագիտությունների խոշորացման, ուսանող/դասախոս, ուսանող/ոչ դասավանդող անձնակազմ հարաբերակցության բարձրացման միջոցով,

11) կվերանայվեն ուսումնական հաստատությունների կառավարման համակարգի, այդ թվում՝ տնօրենների ընտրության, նշանակման, գնահատման, ինչպես նաև կառավարման մարմինների ձևավորման սկզբունքները, քանակական կազմը, ներակայացչականության չափանիշները, իրավասությունները և գործառույթները՝ հաստատության զարգացման հարցերին դրանց մասնակցությունն ապահովելու և ինքնավարությունը խթանելու նպատակով,

12) աստիճանական կավելանան բարձրագույն կրթության ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորման և մասնավոր ներդրումները (ոչ վարձավճարները), ինչպես նաև կփոփոխվեն պետական ֆինանսավորման ձևերը՝ աստիճանական անցում կատարելով կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեթոդին,

13) կներդրվեն ֆինանսավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք կխթանեն և կշահագրգռեն ուսումնական հաստատություններին՝ ներգրավելու արտաբյուջետային միջոցներ, բուհի ֆինանսական կառավարմանը ներգրավելու ինստիտուտները, ֆակուլտետները և ամբիոնները,

14) կընդլայնվեն ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորություններն ու ձևերը,

15) կստեղծվի բուհերի ինքնավարության և հաշվետվողականության հավասարակշռված համակարգ, կբարելավվեն բուհի կառավարման գործառույթները,

16) կսահմանվեն բարեվարքության սկզբունքներ և վարքականոն, դրանք կկիրառվեն, կմշակվի ու կկիրարկվի վերահսկման ու կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման մեխանիզմ:

**VII. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

26. Ծրագիրը կիրականացվի երեք փուլերով՝ ըստ կից ճանապարհային քարտեզի:

27. Առաջին փուլում (մինչև 2020թ.) հիմնական նպատակն է ռացիոնալ համակարգի ձևավորումը՝ ընկալելի քաղաքացիների համար և համադրելի ընդունված միջազգային չափանիշներին: Այս փուլում կվերանայվեն կրթության համակարգի ստանդարտները (ներառյալ հասկացություններն ու տերմինները)՝ ապահովելով դրանց համադրելիությունը, կձևավորվի կրթության ցուցանիշների՝ ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխանության հավաստման արժանահավատ և վստահելի համակարգ, կիրականացվեն կրթական համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ ուղղված արդյունավետության բարձրացմանը և կրթական ծրագրերի հստակեցմանը, մասնավորապես՝ տարանջատելով ակադեմիական և մասնագիտական ուղղվածության ծրագրերը: Ինստիտուցիոնալ վերակազմավորումների արդյունքում ավարտուն տեսքի կբերվի կրթության համակարգը:

28. Երկրորդ փուլում (2021-2025թթ.) գերակայությունը կլինի ամբողջական ձևավորումը. Ուսումնական հաստատությունները կհամալրվեն որակյալ և արդիական ուսումնանյութական ռեսուրսներով, մանկավարժական անձնակազմով, կառավարման մարմիններում կամրապնդվեն համագործակցային, թափանցիկ և հաշվետվողական կառավարման կարողությունները, կրթության բոլոր մակարդակներում կարմատավորվեն բարեվարքության սկզբունքները:

29. Երրորդ՝ առաջանցիկ զարգացման փուլի (2026-2030թթ.) գլխավոր խնդիրը կլինի կրթության արդյունքներում հասնել բարձրակարգ նվաճումների, ինչը կապահովի Հայաստանի կրթության միջազգային ճանաչումը:

30. Ծրագրի իրականացման պատասխանատուն և համակարգողը կրթության պետական կառավարման լիազորված մարմինն է:

31. Ծրագիրն իրականացվում է առանձին նպատակային ծրագրերի միջոցով: Նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը կկատարվեն պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Նպատակային ծրագրերի ցանկում կընդգրկվեն նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը, որոնք համահունչ են Ծրագրի ռազմավարությանը և ուղղված են սահմանված նպատակների իրականացմանը:

32. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը երկու տարին մեկ անգամ կհրապարակի Ծրագրի առաջընթացի հաշվետվությունը, որը քննարկվի է կրթության հանրապետական համաժողովում:

33. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը կապահովի Ծրագրի մոնիթորինգի մասնակցային և թափանցիկ գործընթացը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Փուլերը	Համակարգի ռացիոնալացում (2018-2020թթ.)	Կարողությունների զարգացում (2021-2025թթ.)	Առաջանցիկ զարգացում (2026-2030թթ.)
Ակնկալվող արդյունքը	Ընկալելի և համադրելի համակարգ	Կարողությունների ամբողջական ձևավորում	Բարձրակարգ նվաճումներ, Միջազգային ճանաչում
Որակ	Կրթական ծրագրեր (բովանդակություն)		
	Կրթական բոլոր մակարդակներում կրթության բովանդակությունը, վերջնարդյունքները սահմանող իրավական ակտերը վերանայված են և համապատասխանեցված են ժամանակակից պահանջներին	Դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, ուսումնասօժանդակ նյութերը (այդ թվում էլեկտրոնային) համապատասխանեցված են իրավական ակտերի պահանջներին: Ներդրված է կրթության բովանդակության մոնիթորինգի, որակի գնահատման արդյունավետ,	Ազգային և միջազգային ստուգատեսներում (TIMSS, PIRLS, PISA) արդյունքների առաջընթաց

		վստահելի, թափանցիկ համակարգ:	
	Մարդկային ռեսուրսներ (դասավանդող անձնակազմ)		
	<p>Մանկավարժական/դասախոսական անձնակազմի որակավորման բնութագրերը համապատասխանեցված են ՈԱՇ-ին, սահմանված են որակավորման պահանջները, վերանայված են աշխատանքի ընդունման, գործունեության, մասնագիտական առաջխաղացման կանոնակարգերը</p>	<p>Մանկավարժների պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման համակարգը ապահովում է շրջանավարտների՝ պահանջների համապատասխան որակավորումը, մասնագիտական կատարելագործումը, լավագույն մասնագետների ներհոսքը համակարգ:</p>	<p>Ներդրված է մանկավարժների վարձատրության և սոցիալական պաշտպանվածության արդարացի (արդյունքահեն) և արժանապատիվ (զարգացած երկրների ցուցանիշներին համադրելի – շնչային ՀՆԱ-ի համեմատ) համակարգ: Տարածքային համաչափ զարգացման կարիքներից և գերակայություններից ելնելով ներդրված է մանկավարժական կադրերի պատրաստման ծավալների որոշման և մանկավարժների համալրման արդյունավետ ռազմավարություն:</p>



	Ուսումնանյութական բազա		
	Սահմանված են դպրոցաշինական, տեխնիկական և ուսումնանյութական հագեցվածության նվազագույն ստանդարտները	Ուսումնական հաստատություններն ապահովված են սահմանված ստանդարտներին համապատասխան ռեսուրսներով:	
Մատչելիություն - Ներառականություն	Կրթություն ստանալու հնարավոր ճանապարհների և միջոցների բազմազանեցում (ներդրված են հեռավար կրթության, կրթական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգերը)	Հանրակրթության համակարգում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության, Ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայություններ ներդրված են բոլոր համայնքներում:	Ապահովված է յուրաքանչյուրի՝ իր կարիքներին և ձգտումներին համապատասխան որակյալ կրթության հնարավորությունը
Արդյունավետություն	Սահմանված են ուսումնական հաստատությունների տեղաբաշխման, գործունեության, իրավական կարգավիճակի արդյունավետ սկզբունքները և չափանիշները՝ հաշվի առնելով մատչելիության, ցանցային փոխկապակցման, կլաստերային մոտեցումները:	Ձևավորված է ընտրված չափանիշներին համապատասխան ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ համակարգ:	

<p>Կառավարման համակարգ</p>	<p>Ներդրված են Կրթական ծրագրերի միջազգային դասակարգիչներին համապատասխան ազգային դասակարգիչները Բոլոր մակարդակներում սահմանված են առաջընթացի առանցքային ցուցիչները (KPI)</p>	<p>Գործում է տվյալների վրա հիմնված կառավարման համակարգը: Ամբողջացված է կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (e-Education): Ներդրված է արդյունքից կախված ֆինանսավորման համակարգ: Անցում է կատարված ծրագրերի կառավարման մեխանիզմներին:</p>	<p>Միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվող համաթվերում (ինդեքսներում) կրթության ցուցանիշների առաջընթաց:</p>

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԶԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ**  
**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ**  
**ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<b>1.</b>	<p><b>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</b></p> <p>Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, և պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումն ու զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան: «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը մշակվել է հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը, կրթության համակարգի վերջին տարիների ձեռքբերումներն ու մարտահրավերները, ինչպես նաև ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» և «Կրթություն 2030. Դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչհոնի հռչակագիրը:</p> <p>Բացի այդ, ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության ծրագրի միջոցառումների ցանկի 83-րդ կետի համաձայն, 2016 թվականին ՀՀ կառավարության քննարկմանն էր ներկայացվել «ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագրի» նախագիծը, ակայն այն վերադարձվել է լրամշակելու առաջարկով: Եվ ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի միջոցառումների ցանկի 141-րդ կետի համաձայն, այն վերստին վերանայվել ու լրամշակված տարբերակով ներկայացվում է ՀՀ կառավարության քննարկմանը: Այսպիսով «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծի մշակումը հանդիսանում է արդեն իսկ մեկնարկած գործընթացի տրամաբանական շարունակությունը:</p> <p><b>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները</b></p> <p>Կրթության բնագավառում ներկայիս բարեփոխումներն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքում (ՀՕ-246-Ն) ամրագրված բարեփոխումների շարունակականության համաձայն: Կրթության համակարգի ներկա փուլի զարգացման նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները և ռազմավարության սկզբունքները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության ու գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը:</p> <p><b>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</b></p> <p>Հիմք ընդունելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծում սահմանվել են ՀՀ կրթության ոլորտի զարգացման գերակայությունները, ռազմավարության սկզբունքներն ու ծրագրային</p>
-----------	--

	<p>ուղղությունները:</p>
2.	<p><b>Առաջարկվող կարգավորման բնույթը</b></p> <p>«ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծում այնպիսի ռազմավարական մոտեցումների որդեգրում, որոնք կապահովեն կրթության կայուն զարգացման առավել նպատակասլացություն և արդյունավետություն:</p>
3.	<p><b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b></p> <p>Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ Նախագծի վերանայման ու լրամշակման աշխատանքներում աջակցություն է տրամադրել Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն հիմնադրամը: Նախագիծը սահմանված կարգով դրվել է շրջանառության՝ ուղարկվել է շահագրգիռ գերատեսչություններ՝ կարծիքի, ինչպես նաև դրվել է հանրային քննարկման՝ <a href="http://www.edu.am">www.edu.am</a> և <a href="http://e-draft.am">e-draft.am</a> էլեկտրոնային հարթակներում: Նախագծի առնչությամբ նաև կազմակերպվել են քննարկումներ՝ միջազգային դոկոր կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:</p>
4.	<p><b>Ակնկալվող արդյունքը</b></p> <p>Կրթության առաջընթացն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար հետագա զարգացումները կիրականացվեն՝ ըստ սահմանված գերակա ուղղությունների՝ զարգացման նպատակային ցուցանիշների, որոնք կնպաստեն Հայաստանի ընդհանուր մրցունակության բարձրացմանը:</p>

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ  
ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքների

Հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.	<p align="center"><b>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</b> 14.11.2017 թիվ ԱԱ/ԱՌՊ1/11779-17</p>	<p>1. Նախագծի 2-րդ բաժնի 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ ենթակետով. «4) նպաստում է նոր սերնդի քաղաքացու դաստիարակությանն ու ձևավորմանը»:</p>	Ընդունված չէ:	
		<p>2. Նախագծի 3-րդ՝ «Կրթության զարգացման ռազմավարական մոտեցումները» բաժնի 7-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ» պարբերությամբ. «դ. մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում (արհեստագործական կրթություն, միջին մասնագիտական և բարձրագույն) մասնագետների առաջարկի և աշխատաշուկայում նրանց պահանջարկի համապատասխանության ապահովումը՝ հիմնված համապատասխան վերլուծությունների, գնահատումների և կանխատեսումների վրա, կրառնա առաջնահերթությունն ըստ մասնագիտությունների սովորողների թվաքանակի պլանավորման համար»:</p>	Ընդունված չէ:	

		<p>3. Նախագծի 5-րդ բաժնի 15-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.          «15. <b>Թիրախ 4.</b> Մինչև 2030 թվականը ապահովել ՀՀ տնտեսության զարգացման և աշխատանքի շուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն ունեցող երիտասարդների և մեծահասակների մասնագիտական կրթությունը՝ վերջիններիս համար արժանապատիվ աշխատանք գտնելու, գործազրկությունը նվազեցնելու և գործարարությունը խթանելու նպատակով:»:</p>	Ընդունված չէ:	
		<p>4. Նախագծի 6-րդ բաժնի 20-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը «ուսուցումը,» բառից հետո լրացնել «ինչպես նաև սովորողների ինքնուրույն և ստեղծագործական մտածողության զարգացումը,» բառերով:</p>	Ընդունված է:	Կատարվել է լրացում:
		<p>5. Նախագծի հավելվածում ներկայացված ճանապարհային քարտեզը ըստ էության շատ կարևոր է, սակայն ցանկալի կլիներ այն մշակել և ներկայացնել հաստատման առանձին փուլերի իրականացման ժամկետների նախանշմամբ, ինչը հնարավորություն կտա հստակեցնել այդ փուլերի իրականացման հաջորդականությունը կամ դրանցից որոշների զուգահեռ ընթացքը:</p>	Ընդունված է մասամբ:	Փուլերի շամկետները նշված են նախագծի 27-29 կետերում:
2.	<p><b>ՀՀ առողջապահության նախարարություն</b>          17.11.2017          թիվ ԼԱ/11.1/14320-17</p>	<p>1. Նախագծում չի նշվում նպատակային կրթական ծրագրերի մասին, որոնք շատ կարևոր են նաև առողջապահության բնագավառի մարդկային ներուժի զարգացման հարցում: Ուստի, առաջարկվում է Նախագծի հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետում «ճանապարհները,» բառից հետո ավելացնել «ինչպես նաև, ՀՀ մարզերը երիտասարդ և պահանջված մասնագետներով համալրելու նպատակով, շարունակաբար կներդրվեն և կընդլայնվեն նպատակային կրթական ծրագրերը,» բառերը:</p>	Ընդունված չէ:	

		2. Նախագծի հավելվածի 7-րդ կետի գ. ենթակետում «կազմակերպահրավական» բառը փոխարինել «կազմակերպական իրավական» բառերով՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները:	Ընդունված է:	Կատարվել է փոփոխություն
3.	<b>ՀՀ ֆինանսների նախարարություն</b> 20.11.2017 թիվ 01/9-2/21176-17	Նախագծի՝ «Կրթության զարգացման գերակայությունները և գործողությունների շրջանակը» բաժնի 23-րդ կետով նշվում է, որ պետք է մեղմացվեն և վերացվեն սոցիալական, տնտեսական և մշակութային գործոնները, որոնք դեռևս խոչընդոտում են որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովումը: Մինչդեռ Նախագծում, ինչպես նաև հավելվածով ներկայացված ճանապարհային քարտեզում որևէ միջոցառում չի նախատեսվում այդ ուղղությամբ: Այս կապակցությամբ առաջարկում ենք նախ Նախագծում ներառել, թե կոնկրետ ինչպիսի սոցիալական, տնտեսական և մշակութային գործոններ են խոչընդոտում որակյալ կրթությանը, մյուս կողմից ներկայացնել դրանց հաղթահարման ուղղություններն ու միջոցառումները:	Ընդունված է:	Կատարված է լրացում
4.	<b>ՀՀ սփյուռքի նախարարություն</b> 20.11.2017 թիվ 01/16.1/2581-17	1. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 21-րդ և 27-րդ կետերում գործածվում է «միջազգային ստանդարտներ», իսկ 20-րդ կետի «բ.» պարբերությունում՝ «միջազգային չափորոշիչներ» իրավական եզրույթները, որոնք բովանդակային առումով միևնույն հասկացություններն են: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառել միևնույն բառերը,	Ընդունված է մասամբ: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի կրթական ծրագրերի համար հիմք են հանդիսանում կրթական չափորոշիչները, իսկ կրթական համակարգի այլ բաղադրիչներ պետք է կարգավորվեն համաձայն «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի:	Կատարված է փոփոխություն



		<p>տերմինները կամ բառակապակցությունները:  <b>Առաջարկվում է</b> հստակեցնել այդ տարբերությունը:</p>		
		<p>2. Նախագծի II բաժնի 6-րդ կետով սահմանվում է կրթության զարգացման գլխավոր նպատակը, որը միտված է կրթական համակարգի ապագայի ձևավորմանը: Մեր կարծիքով այն պետք է համապատասխանի նաև միջազգային իրավական ակտերով սահմանված չափորոշիչներին:  <b>Առաջարկվում է</b> Նախագծի 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով.  «4) համապատասխանում է միջազգային չափորոշիչներին»:</p>	<p>Ընդունված չէ:</p>	
		<p>3. Նախագծի III բաժնի 7-րդ կետով սահմանվում են կրթության զարգացման գլխավոր նպատակի իրականացման համար ռազմավարական մոտեցումները, որի առաջնային քայլերից է կարիքներից բխող պլանավորումը, որի համաձայն պետք է բազմազանվեն ուսումնական ծրագրերը, կրթության կազմակերպման ձևերն ու մեթոդները, կրթություն ստանալու հնարավոր ճանապարհները: Գտնում ենք, որ որպես ռազմավարական մոտեցում պետք է դիտարկել նաև սփյուռքում ժամանակակից պահանջներին համապատասխան դասագրքերի, ծրագրերի, էլեկտրոնային նյութերի ստեղծումը և համացանցային հեռավար ուսուցման համակարգի հնարավորությունների օգտագործումը:</p>	<p>Ընդունված չէ:  Առաջարկված մոտեցումը պետք է ամրագրվի սփյուռքին ուղղված ծրագրերում:</p>	

		<p><b>Առաջարկվում է</b> Նախագծի 7-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ.» պարբերությունով.</p> <p>«դ. սփյուռքի հայկական կրթօջախներում հայեցի կրթության և դաստիարակության գործի կազմակերպման համար սփյուռքի ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան դասագրքերի, ծրագրերի, էլեկտրոնային նյութերի ստեղծում և համացանցային հեռավար ուսուցման համակարգի հնարավորությունների օգտագործում,»:</p>		
		<p>4. ՀՀ սփյուռքի նախարարությունը տարիներ շարունակ իրականացնում է, սփյուռքի հայկական համայնքների կրթական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերով նախատեսված տարբեր միջոցառումներ՝ ուսուցչական և ուսումնական նյութերով ապահովում, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը տալիս է նաև ուսումնառության հնարավորություններ ուղղված սփյուռքահայ ուսանողների կրթական խնդիրների լուծմանը: Գտնում ենք, որ խնդիրը նույնպես պետք է համարել թիրախային և այն ընդգրկել նախագծում:</p> <p><b>Առաջարկվում է</b> Նախագծի V բաժինը 18-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ կետով.</p> <p><b>«19.Թիրախ 6.</b> Ցուցաբերել աջակցություն սփյուռքի հայկական համայնքների կրթական խնդիրների լուծմանը, մասնավորապես՝ կրթօջախները ուսուցիչներով և ուսումնական նյութերով ապահովմանը, Հայաստանի բարձրագույն և միջին մասնագիտական հաստատություններում սփյուռքահայ ուսանողների ուսումնառության հնարավորությունների ընդլայնմանը»:</p>	<p>Ընդունված չէ:</p>	
		<p>5. Նախագծի VI բաժնի 20-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ սահմանված է, որ կրթության</p>	<p>Ընդունված չէ:</p>	

		<p>որակի բարձրացման գործողությունների շրջանակն ընդգրկում է կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում, մասնավորապես՝ կրթության բոլոր մակարդակներում դաստիարակության բաղադրիչի ամրապնդում, որում նպատակահարմար ենք համարում որպես դաստիարակության բաղադրիչի հիմք ամրագրել սփյուռքում հայ երիտասարդության հայեցի դաստիարակություն, ազգային ինքնության և հայրենիքի նկատմամբ պատասխանատվության գիտակցումը:</p> <p><b>Առաջարկվում է</b> Նախագծի VI բաժնի 20-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«դ. կրթության բոլոր մակարդակներում դաստիարակության բաղադրիչի ամրապնդում՝ պետականության դերի գիտակցման, հայրենասիրական, քաղաքացիական և էկոլոգիական, ինչպես նաև սփյուռքում հայ երիտասարդների հայեցի ուսուցման ու դաստիարակության միջոցով բոլոր սովորողներին զինելով հայրենիքի նկատմամբ պատասխանատվության և հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով ու կարողություններով,»:</p>		
		<p>6. Նախագծի VII բաժնի 27-րդ կետով սահմանված է կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման առաջին փուլը, որի հիմնական նպատակը պետք է հանդիսանա նաև սփյուռքում լեզվամշակութային ուժացման դեմ պայքարը, որը հնարավոր կլինի իրականացնել նաև հայկական մեկօրյա և ամենօրյա դպրոցների կրթական խնդիրների լուծմանն աջակցությամբ:</p> <p><b>Առաջարկվում է</b> Նախագծի VII բաժնի 27-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.</p>	<p>Ընդունված չէ:</p>	

		«Ափյուռքում լեզվամշակութային ուժացման դեմ պայքարում կներդրվի հայկական մեկօրյա և ամենօրյա դպրոցների կրթական խնդիրների լուծմանն աջակցության կայուն համակարգ:»:		
5.	<b>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</b> 14.11.2017 թիվ ԻԱ/ՄԱ/10374-17	1. Նախագծով հաստատվող հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին մասից հանել 1-ին նախադասությունը,	Ընդունված չէ:	
		2. Հավելվածի 2-րդ գլխի 6-րդ մասից հանել «ապագային միտված» բառերը,	Ընդունված չէ:	
		3. Հավելվածի 3-րդ գլխի 7-րդ մասի 3-րդ կետում «տեղական» բառը փոխարինել «հայաստանյան» բառով,	Ընդունված է:	Կատարված է փոփոխություն
		4. Հավելվածի 5-րդ գլխի 9-րդ մասում «բոլոր երեխաները» բառերը փոխարինել «բոլորը» բառով,	Ընդունված չէ:	
		5. Հավելվածի 5-րդ գլխի 18-րդ մասում «աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց» բառերը փոխարինել «անձանց» բառերով,	Ընդունված չէ:	
		6. Հավելվածի 20-րդ մասի 1-ին կետի «է.» ենթակետում օգտագործված «գիտահետազոտական ինստիտուտների» բառերը համապատասխանեցնել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 11-րդ պարբերությանը,	Ընդունված է:	Կատարված է փոփոխություն

		<p>7. Հավելվածի 6-րդ գլխի 20-րդ մասի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով. «Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին կից ուսումնափորձարարական, ցուցադրական տնտեսությունների ստեղծում, որը կնպաստի մասնագիտական հմտությունների տիրապետող դրակյալ մասնագետներ պատրաստելու գործընթացին, ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնմանը, կձևավորվի ուսումնական հաստատություն-տնտեսություն կապը, ինչը հնարավորություն կտա ուսումնական հաստատություններում կազմակերպել և իրականացնել ֆերմերների վերապատրաստում և խորհրդատվական ծառայությունների մատուցում:»</p>	Ընդունված չէ:	
		<p>8. Հավելվածի 6-րդ գլխի 20-րդ մասի 2-րդ կետի «դ)» ենթակետը «մեղմացման» բառից հետո լրացնել «, նախնական զինվորական պատրաստությանն ու առաջին բուժօգնությանն» բառերով, իսկ «կրթություն» բառից հետո՝ «հատկապես սահմանամերձ գյուղական բնակավայրերի համար» բառերով, իսկ «ե)» ենթակետը՝ «լաբորատորիաների» բառից հետո լրացնել «մարզադահլիճների» բառով:</p>	Ընդունված է մասամբ:	ե) կետում կատարվել է լրացում
		<p>9. Ծրագրում համառոտ նկարագրել նախորդ Ծրագրի իրականացման արդյունքները, ձեռքբերումները և նախանշել կրթության ոլորտում ներկայիս առկա հիմնական խնդիրները:</p>	Ընդունված չէ:	
6.	<p><b>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</b> 2017-11-27 թիվ 01/08.1.1/11714-17</p>	<p><b>1. Կրթական ծառայություն մատուցողների միջև մրցակցային միջավայրի ձևավորում:</b> Պետության խնդիրն այստեղ, թերևս, արժեքների և չափորոշիչների սահմանումն է, ըստ որոնց մրցակցելու են կրթական ծառայություններ մատուցողները: Ֆինանսական</p>	Ընդունված չէ: Կրթության զարգացման տեսանկյունից կարևորվում է համագործակցային մոտեցումը:	

		անկախության մասը կարևոր է, սակայն մրցակցությունը պետք է ծավալվի ոչ ֆինանսական չափանիշով, իսկ վերջինս ուղղակիորեն կարտահայտի ծառայության որակական մակարդակը:		
		<p><b>2. Կրթական ծառայության սպառողը՝ որպես պահանջարկ թելադրող.</b> առանցքային հարց է ծառայություն մատուցողի ու ստացողի միջև հարաբերությունների ձևավորման փիլիսոփայության արմատական վերանայումը: Սա անմիջականորեն կապվում է նախորդ առաջնահերթության հետ: Անհրաժեշտ է գործնական հնարավորություններ ձևավորել, որ անձը հնարավորություն ունենա ստանալ (զնել) այն կրթությունը և այն հաստատությունում, որի պահանջարկը ներկայացնում է, և նրա ընտրությունն առավելագույնս զերծ լինի պայմանական հանգամանքներից: Տարբերակներից մեկը, թերևս, պետական պատվերի տեղաբաշխումը առաջարկից (ծառայություն մատուցող) պահանջարկ (ծառայություն ստացող) տեղափոխելն է: Համակարգային տարրերից է նաև կրթական հաստատություններում ապագա ուսանողների հետ պրոակտիվ գործելաձևերի կայացումը, ինչը ևս հնարավոր է աքսելերացնել հասցեական ծրագրերով:</p>	Ընդունելի է:	Նախագծի 7-րդ կետի 1-ին ենթակետում ամրագրված է համահունչ մոտեցում:
		<p><b>3. Պետական բաղաբաղանդային առաջնահերթությունների գտում:</b> Ընդունված մոտեցմամբ պայմանավորված, օրինակ, նախագծում շեշտադրվում է կրթության հասանելիության հարցը, այնինչ, կարծում ենք, որ վերջինս ոչ միայն և ոչ այնքան կրթական համակարգի, այլ՝ սոցիալական և տնտեսական բաղադրիչներով պայմանավորված հիմնահարց է, որը պետք է հասցեագրվի ոչ կրթական</p>	Ընդունելի է:	Առաջարկը համահունչ է նախագծի 6-րդ բաժնում սահմանված գերակայություններին

		<p>Ճառայությունների որակի ու մրցունակության հաշվին: Այլ դեպքում՝ հայրենասիրությունը որպես ինքնուրույն կատեգորիա և կրթական համակարգի առարկա դիտարկելը թերևս շեղում է երևույթի ընկալումը որպես հասարակական կյանքի բոլոր բնագավառներին առնչվող դրսևորում: Դա անշուշտ համատարած ֆոնն է կամ միջավայրը, որն այնուամենայնիվ, հստակ դրսևորումներ ունի տարբեր բնագավառում: Օրինակ, կրթության բնագավառում, լավագույն դասավանդումն ու բարեխիղճ վերաբերմունքը ուսուցչի/դասախոսի կողմից հայրենասիրության լավագույն դրսևորումն է, իսկ ուսանողի կողմից՝ առավելագույն ջանքը մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու համար:</p>		
		<p><b>4. Կրթության համակարգում ավանդական խնդիրներին արդիական լուծումներ:</b> Անհրաժեշտ է կրթական կլաստերը դիտարկել ժամանակակից զարգացումների ներքո և նորովի գնահատել հատկապես բուհերի դերակատարումը: Օրինակ, կրթության ոլորտի առանցքային խնդիրներից է մանկավարժական անձնակազմի որակի բարելավումը: Ավանդական ու իներցիոն զարգացումներով այստեղ թերևս կենտրոնական դեր է վերապահվում մանկավարժական կրթությունն ապահովող հաստատություններին: Այդուհանդերձ, կարևոր հարցադրում է՝ թե ժամանակակից իրողությունների, միջառարկայական կապերի հետզհետե խորացման, սիներգիկ նոր բնագավառների առաջացման, ինչպես նաև՝ միջազգային պրակտիկայի տեսակետից մանկավարժությունն ու դասախոսությունը որքանով են մասնագիտություններ և որքանով գործունեության բնագավառ: Միգուցե անհրաժեշտություն կա այս իմաստով վերանայել մանկավարժական կրթության</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Նախագծի 20-րդ կետի 3-րդ ենթակետում ամրագրված է բարձր որակավորմամբ անձնակազմի խնդիրը:</p>

		սկզբունքներն ու պահանջները:		
		<p><b>5. Կրթություն ողջ կյանքի ընթացքում:</b> Այս սկզբունքը թերևս պետք է ընկալվի ոչ թե պարզապես միջազգային գործելաձևերին ներդաշնակությունը ապահովելու տեսանկյունից, այլ մեծապես՝ տնտեսության արագընթաց զարգացումներին աշխատանքի շուկայի համարժեք արձագանքի և հասարակության մեջ նորանոր գիտելիքներ ձեռքբերելու խրախուսման անհրաժեշտությամբ: Սա մտածելակերպի փոփոխության խնդիր է, որին կրթական համակարգը պետք է ընդառաջ գնա:</p>	Ընդունված է:	Նախագծի 16-րդ կետում կատարվել է լրացում:
7.	<p><b>«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամ</b> 16.11.2017 թիվ 37/37.2/25283-17</p>	<p>1. Նախագծում առաջարկվում է սահմանել հետևյալ թիրախները՝</p> <p>1.1. <b>Թիրախ 1</b> – «Մինչև 2030 թվականը ապահովել, որպեսզի բոլոր երեխաները <b>սկսած նախադպրոցական կրթարաններից պատրաստ լինեն</b> և ստանան որակյալ միջնակարգ կամ նախնական մասնագիտական կրթություն՝ ինքնուրույն կյանքի լիարժեք պատրաստված լինելու, կրթության հաջորդ աստիճանում ուսումն շարունակելու և արժանապատիվ աշխատանքային գործունեությանն անցնելու նպատակով»:</p> <p><i>Լրացումը (ընդգծված) պայմանավորված է նրանով, որ նախագծում ներկայացված Թիրախ 3-ը, որը վերաբերվում է նախադպրոցական հասակի երեխաների կրթությանը չի հանդիսանում կրթական համակարգի ինքնուրույն բաղադրիչ, ուստի չի կարող հանդես գալ որպես կրթության զարգացման ռազմավարական նպատակ կամ այդ նպատակի համար սահմանված թիրախ: Սակայն, հասկանալով դրա՝ դպրոցական կրթության որակի համար</i></p>	Ընդունված է մասամբ:	



		<p><i>նախապայման հանդիսանալու կարևորությունը այն կարող է նշվել Թիրախ 1-ում, իսկ մանրամասնվել որպես՝ ենթաթիրախ:</i></p> <p><b>1.2. Թիրախ 2</b> – <b>«Մինչև 2030 թվականը</b> կրթության բոլոր մակարդակներում ամրապնդել դաստիարակության բաղադրիչը: Պետականության դերի գիտակցման, հայրենասիրական, քաղաքացիական և էկոլոգիական ուսուցման և դաստիարակության միջոցներով բոլոր սովորողներին զինել հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով»: <i>Լրացումը (ընդգծված) պայմանավորված է նրանով, որ թիրախներ սահմանելիս պարտադիր սահմանվում են դրանց հասնելու մոտավոր ժամկետները: Բացի այդ, նախագծում այս թիրախից հետո՝ 10-րդ և 11-րդ կետերով բերվող դրույթները՝ պետք է դիտարկել որպես նշված թիրախին հասնելու գործիքներ՝ օրինակ մարդու իրավունքների կրթության բաղադրիչի ներառումը կամ ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցանման օգտագործումը, որոնք պետք է ունենան կատարման չափելի ցուցանիշներ:</i></p> <p><b>2. Թիրախ 3</b> – «Մինչև 2030 թվականը ապահովել բոլոր խոցելի խմբերի՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հավասար մասնակցության հնարավորությունը կրթության բոլոր մակարդակներում»:</p> <p><b>3. Թիրախ 4</b> – «Մինչև 2030 թվականը ապահովել կրթության համակարգի արդյունավետության բարձրացում»: Առաջարկվող նոր թիրախի ներքո պետք է որպես ենթաթիրախ շարադրվեն կրթության ոլորտում հիմնական գերակայությունները՝ կրթության որակ, մատչելիություն և ընդգրկվածություն և համակարգի կառավարում, ընդ որում դրանցից</p>		
--	--	--	--	--

		<p>ածանցվողները՝ իրենց հերթին դասակարգվում են որպես ենթա-թիրախներ: Օրինակ՝ «Թիրախ 4. Մինչև 2030 թվականը ապահովել կրթության համակարգի արդյունավետության բարձրացումը:</p> <p>Թիրախ 4.1. Մինչև 2030 թվականը ապահովել կրթության որակի բարձրացումը հանրակրթության ոլորտում:</p> <p>Թիրախ 4.1.1. Մինչև 2020 թվականը բարելավել հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանները՝ սահմանված անապահով մարզերում»:</p> <p>Թիրախ 4.1.1-ի Նպատակային ցուցանիշ՝ «Մինչև 2020 թվականը ապահովել թվով 10 դպրոցի շենքի վերանորոգումը՝ սահմանված 2 անապահով մարզերում»: Միայն ռազմավարական նպատակների այս տեսակ թիրախավորմամբ կարող ենք փաստել արդյոք նպատակը իրագործված է, թե ոչ:</p>		
		<p>4. Նախագծում ներկայացված 4-րդ թիրախը առաջարկվել է հանել, քանի որ այն առանձին թիրախ չէ, այլ հանդիսանում է առաջին թիրախից բխող մաս, այսինքն՝ արժանապատիվ աշխատանք գտնելը, գործազրկությունը նվազեցնելը և գործարարությունը խթանելը չեն կարող դիտվել որպես կրթության զարգացման թիրախ, դրանք Թիրախ 1-ի վերջնարդյունք են:</p>	<p>Ընդունված չէ: Թիրախ 1-ն ուղղված է երեխաներին, իսկ թիրախ 4-ը՝ երիտասարդներին և մեծահասակներին և չի հանդիսանում թիրախ 1-ի ուղղակի արդյունքը</p>	
		<p>5. Նախագծում, բացի ռազմավարական նպատակները արտացոլող թիրախներից, ենթաթիրախներից պետք է նաև հստակ սահմանված լինեն դրանց նպատակային ցուցանիշները և դրանց կատարումը ապահովող գործիքակազմը՝ միջոցառումներն ու գործողությունները, քանի որ ռազմավարական նպատակների ընդհանրական բնույթի թիրախավորմամբ հնարավոր չէ ծրագրերը ենթարկել գնահատման և մշտադիտարկման, ինչպես</p>	<p>Ընդունված է ի գիտություն:</p>	<p>Ցուցանիշները մշակվում են Կայուն զարգացման նպատակների տեղայնացման գործընթացի շրջանակում</p>

		<p>նաև արձանագրել ստացված արդյունքները: Նախագծում ներկայացված թիրախները չունեն ցուցանիշներ: Մինչդեռ, ռազմավարական նպատակները արտացոլող թիրախները պետք է սահմանվեն հնարավորինս հստակ և չափելի ցուցանիշներով՝ թվային արտահայտությամբ կամ այլ կերպ չափելի և որոշակի ժամանակահատվածի համար, իսկ ցուցանիշները սահմանելիս, դրանցից յուրաքանչյուրի գծով պարտադիր պետք է սահմանվեն ինչպես համապատասխան թիրախային, այնպես էլ դրանց բազային ցուցանիշները՝ որպեսզի հնարավոր լինի գնահատման ենթարկել դրա իրագործումը (տես 2-րդ կետի օրինակը):</p>		
		<p>6. Միաժամանակ, նախագծում առաջարկվում է համապատասխան թիրախներում ներառել հետևյալ միջոցառումները.</p> <p>6.1. նախատեսել հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր կազմակերպարավական ձև՝ պետական-մասնավոր գործընկերությամբ (PPT) (մասնակցությամբ) ուսումնական հաստատություններ: Այս ձևը թույլ է տալիս պետական և սեփական միջոցների հաշվին կազմակերպել աշակերտների՝ մասնավոր կրթական չափորոշիչներով կրթություն՝ համեմատաբար ցածր ուսման վարձերով:</p> <p>6.2. հանրակրթական դպրոցների ավագ դասարաններում ձեռնարկատիրության կամ ավագ դպրոցի այլ առարկաներ դասավանդելու համար ներգրավել բուհերի մագիստրոսների, ասպիրանտների և գիտական աստիճան ստացածների կամ տվյալ առարկան դասավանդողների՝ առանց պահանջելու պարտադիր մանկավարժական որակավորում:</p>	<p>Ընդունված է:</p> <p>Ընդունված չէ:</p>	

		<p>6.3. նախատեսել ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների նախակրթարանների և տարրական դասարանների՝ լիազոր մարմնի կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա ընտրված աշակերտներին ողջ տարվա ընթացքում (այդ թվում նաև արձակուրդներին և հանգստյան օրերին) անվճար սննդով ապահովումը, միաժամանակ սահմանելով տրամադրվող սննդի որակական պահանջները, կոնկրետ չափաբաժինները և կալորիականությունը, սննդի պատրաստման և առաքման եղանակները և դրա նկատմամբ պետության վերահսկողության պահանջները: Ներդնել նաև սահմանված խմբերում չընդգրկված երեխաների սննդով ապահովման վճարովի ծրագիր՝ կամավորության սկզբունքով:</p> <p>6.4. նախատեսել դպրոցների կառավարման որակական փոփոխություններ, մասնավորապես՝ ուսումնական հաստատության կոլեգիալ խորհրդի կազմում, բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված (ՀՀ կրթության և գիտության նախարար, լիազորված մարմին, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ) մարմիններից ընգրկել նաև այդ հաստատության հոգաբարձուների խորհուրդը: Սա կապահովի որոշումների կայացման գործում նրանց մասնակցությունը և դրանով կխթանի ներդրումների հոսքը դպրոց:</p> <p>6.5. դադարեցնել պետական ֆինանսավորմամբ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով տրամադրվող նպատակային ուսուցման ծրագրերը և փոխարինել դրանք արդյունավետ և կողմերի համար տնտեսապես փոխշահավետ ծրագրերով՝ խոցելի բնակավայրերը համապատասխան որակավորմամբ մասնագետներով</p>	<p>Ընդունված չէ:</p> <p>Ընդունված չէ:</p> <p>Ընդունված չէ:</p>	
--	--	--	--	--

		ապահովման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:		
8.	<b>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</b> 13.11.2017 թիվ 03/08/6503-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
9.	<b>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</b> 13.11.2017 թիվ 1/06.2/12895-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
10.	<b>ՀՀ սպորտի և երիտասարդական հարցերի նախարարություն</b> 13.11.2017 թիվ 1/5.1/1433-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
11.	<b>ՀՀ մշակույթի նախարարություն</b> 14.11.2017 թիվ 01/3.1/6899-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
12.	<b>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն</b> 14.11.2017 թիվ 01/16.1/20466-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		

13.	<b>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</b> 16.11.2017 թիվ 01/15.2/7361-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
14.	<b>ՀՀ բնապահպանության նախարարություն</b> 20.11.2017 թիվ 1/05.3/12867-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
15.	<b>ՀՀ արդարադատության նախարարություն</b> 04.12.2017 թիվ 01/14/21732-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան:		
16.	<b>ՀՀ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն</b> 04.12.2017 թիվ 01/3811-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան:		
17.	<b>ՀՀ Արարատի մարզպետարան</b> 10.11.2017 թիվ 1/5/1-3/6953-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
18.	<b>ՀՀ Արմավիրի մարզպետարան</b> 13.11.2017 թիվ 01/08.1/4729-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		

19.	<b>ՀՀ Կոտայքի մարզպետարան</b> 13.11.2017 թիվ 01/13.1/5139-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
20.	<b>ՀՀ Արագածոտնի մարզպետարան</b> 14.11.2017 թիվ 01/12.1/4474-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
21.	<b>ՀՀ Շիրակի մարզպետարան</b> 14.11.2017 թիվ 01/7707-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
22.	<b>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան</b> 14.11.2017 թիվ 01/05/5426-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
23.	<b>ՀՀ Վայոց ձորի մարզպետարան</b> 14.11.2017 թիվ 01/05.1/8356-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
24.	<b>ՀՀ Տավուշի մարզպետարան</b> 15.11.2017 թիվ 01/13.3/4882-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		

25.	<b>ՀՀ Սյունիքի մարզպետարան</b> 16.11.2017 թիվ 01/7983-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
26.	<b>ՀՀ Լոռու մարզպետարան</b> 17.11.2017 թիվ101/106.3.2/5829-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
27.	<b>Երևանի քաղաքապետարան</b> 15.11.2017 թիվ 01/7-72432 հ	Առաջարկություններ և դիտողություններ չկան		



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

1.«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

### **ՀՀ բնապահպանության նախարարություն**

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

Նախագծի՝ մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է ապահովել յուրաքանչյուրի՝ իր կարիքներին և ձգտումներին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային միջավայրի վրա ազդեցությունը բացակայում է: Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա **զգալի ազդեցություն չհայտնաբերվելու** եզրակացություն:

### **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**

## **ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

Նախագծի՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է ապահովել յուրաքանչյուրի՝ իր կարիքներին և ձգտումներին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **չեզոք ազդեցություն**:

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**

## **ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

Վերոնշյալ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել դրական, իսկ ծախսերի մասով, հիմք ընդունելով Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետը, համաձայն որի՝ կրթության ոլորտին ուղղվող ծախսերը պետք է համապատասխանեն ՀՀ հեռանկարային զարգացման ծրագրերով և միջնաժամկետ ծախսային ծրագրերով սահմանված չափաքանակներին, ՀՀ պետական բյուջեի ծախսերի և ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա **չեզոք ազդեցություն**:

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ**  
**ԳՆԱՀԱՏՄԱՆ**

**«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը  
զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի  
ընդունման վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը  
զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի  
ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀՀ առողջապահության նախարարություն**